Մրցույթի հայտարարություն

ՀՀ Արագածոտնի մարզի <<Աշտարակի Պ. Պռոշյանի անվան հ.3 հիմնական դպրոց >> ՊՈԱԿ-ի տնօրենի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար

ՀՀ Արագածոտնի մարզի <<Աշտարակի Պ. Պռոշյանի անվան հ. 3 հիմնական դպրոց>> ՊՈԱԿ-ի կառավարման խորհուրդը հայտարարում է բաց մրցույթ՝ հաստատության տնօրենի թափուր պաշտոնի համար:

- Հաստատության տնօրենի պաշտոնի համար անցկացվող մրցույթին մասնակցելու պարտադիր պայմաններն են՝

1. ՀՀ քաղաքացիությունը,
2. «Հանրակրթության մասին» օրենքի 12-րդ հոդվածի 17-րդ մասով սահմանված հիմքերի բացակայությունը:

Մրցույթին մասնակցելու համար հավակնորդը ներկայացնում է՝

1. դիմում՝ հաստատության խորհրդի նախագահի անունով,
2. Հ Հ քաղաքացու անձնագրի կամ նույնականացման քարտի պատճենը (բնօրինակի հետ),
3. հաստատության ղեկավարման իրավունքի (հավաստագրի) պատճենը (բնօրինակի հետ),
4. տվյալ հաստատության զարգացման ծրագիրը, որը հավակնորդը կարող է ներկայացնել մինչև գործերի ընդունման ժամկետի ավարտը (այդ թվում՝ էլեկտրոնային տարբերակով), որը խորհրդի որոշմամբ լիազորված խորհրդի անդամը հավակնորդի կողմից տրամադրելուց հետո 1 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնում է հրապարակման տվյալ դպրոցի պաշտոնական կայքում, ինչպես նաև տրամադրում է խորհրդի մյուս անդամներին,
5. Ինքնակենսագրություն:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ: Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի՝ ըստ կարգի:

Փաստաթղթերն ընդունվում են 2021 թ. նոյեմբերի 1-ից մինչև նոյեմբերի 19-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից մինչև ժամը 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի և օրենքով սահմանված ոչ աշխատանքային՝ տոնական և հիշատակի օրերից, Աշտարակի Պ. Պռոշյանի անվան հ.3 հիմնական դպրոցում:

Մրցույթը տեղի կունենա **2021թ. դեկտեմբերի 3-ին՝ ժամը 14:00-ին**, Աշտարակի Պ. Պռոշյանի անվան հ.3 հիմնական դպրոցում, հասցե՝ ք. Աշտարակ Չարենցի 1:

Տեղեկությունների համար զանգահարել 098-04-96-25 հեռախոսահամարով, էլ. հասցե՝ ashtarak3@ schools.am